ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2024 թվականի N 1284 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024/2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ (ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԵՎ ԻՆՏԵՐՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ   է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում 2024/2025 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի (ըստ մասնագիտությունների) և ինտերնատուրայի ընդունելության տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշա-կույթի և սպորտի նախարարությանը համապատասխան նախարարությունների

կամ ուսումնական հաստատությունների հայտերի հիման վրա տրամադրված տե-ղերի շրջանակում իրականացնել թափուր մնացած տեղերի վերաբաշխում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 15-ի N 1284 - Ն որոշման

Աղյուսակ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024/2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԻՆՏԵՐՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

| Մասնագիտությունը | Քանակը |
|---|---|
| 1. Անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա | 1 |
| 2. Մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա | 1 |
| 3. Ինֆեկցիոն հիվանդություններ | 1 |
| 4. Մանկական ինֆեկցիոն հիվանդություններ | 1 |
| 5. Մանկական վիրաբուժություն | 1 |
| 6. Մանկաբուժություն | 3 |
| 7. Մանկական սրտաբանություն | 1 |
| 8. Շտապ բուժօգնություն | 1 |
| Ընդամենը՝ | 10 |
| 1) «Մանկաբուժություն» մասնագիտությամբ ընդունելությունը իրականացվելու է ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 6005-Լ և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 24-ի N 54-Լ «Բժշկական կրթության ոլորտում կլինիկական օրդինատուրայի հենքի վրա փորձարարական հետբուհական մասնագիտական կրթական ծրագիր ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» համատեղ հրամանի հավելվածի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով: | |

Աղյուսակ N 2

ՀՀ առողջապահության նախարարություն

| Մասնագիտությունը | Քանակը |
|---|---|
| 1. Կլինիկական լաբորատոր ախտորոշում | 3 |
| 2. Ընդհանուր վիրաբուժություն | 3 |
| 3. Անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա | 8 |
| 4. Մանկաբարձություն և գինեկոլոգիա | 4 |
| 5. Քիթ-կոկորդ-ականջաբանություն | 2 |
| 6. Նյարդաբանություն | 5 |
| 7. Ընտանեկան բժշկություն | 24 |
| 8. Հոգեբուժություն | 3 |
| 9. Մանկաբուժություն | 8 |
| 10. Ներքին հիվանդություններ (թերապիա) | 5 |
| 11. Ինֆեկցիոն հիվանդություններ | 1 |
| 12. Ճառագայթային ախտորոշում | 3 |
| 13. Սրտաբանություն | 1 |
| 14. Ներզատաբանություն (էնդոկրինոլոգիա) | 1 |
| 15. Մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա | 1 |
| 16. Նեոնատոլոգիա | 1 |
| 17. Դատաբժշկական փորձաքննություն | 2 |
| Ընդամենը՝ | 75 |
| 1) «Մանկաբուժություն» մասնագիտությամբ ընդունելությունը իրականացվելու է ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 6005-Լ և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 24-ի N 54-Լ «Բժշկական կրթության ոլորտում կլինիկական օրդինատուրայի հենքի վրա փորձարարական հետբուհական մասնագիտական կրթական ծրագիր ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» համատեղ հրամանի հավելվածի հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով: | |

Աղյուսակ N 3

ՀՀ պաշտպանության նախարարություն

| Մասնագիտությունը | Քանակը |
|---|---|
| 1. Անեսթեզիոլոգիա և ինտենսիվ թերապիա | 2 |
| 2. Մաշկաբանություն և վեներոլոգիա | 1 |
| 3. Ներքին հիվանդություններ (թերապիա) | 1 |
| 4. Նյարդաբանություն | 1 |
| 5. Ընդհանուր վիրաբուժություն | 1 |
| 6. Քիթ-կոկորդ-ականջաբանություն | 2 |
| 7. Հոգեբուժություն | 2 |
| 8. Վնասվածքաբանություն | 2 |
| 9. Դիմածնոտային վիրաբուժություն | 2 |
| 10. Վարակաբանություն | 2 |
| 11. Նեյրովիրաբուժություն | 1 |
| 12. Ճառագայթային ախտորոշում | 2 |
| 13. Համաճարակաբանություն | 1 |
| 14. Ուռոլոգիա | 1 |
| 15. Հիգիենա | 1 |
| Ընդամենը՝ | 22 |

Աղյուսակ N 4

ՀՀ պաշտպանության նախարարություն

| Ինտերնատուրա | Քանակը |
|---|---|
| 1. Ընդհանուր բժշկական գործունեություն զինված ուժերում | 50 |
| 2. Ընդհանուր ստոմատոլոգիական գործունեություն | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ